

ջանիկք եւ հրեշտականմանք, զոր ունէին պարծանաւք եւ խնդութեամբ ի սուրբ ձեռս իւրեանց եւ ի պարանոցի: 6 Յորս մատուցեալ դարբիւնքն եւ ի բազում ժամս ջանացեալ խարտոցաւք եւ այլ ազգի ազգի հնարիւք՝ եւ ոչ կարացին կտրել զստուարութիւն բեւեռացն. յետոյ ապա եղեալ ի վերայ սալիցն եւ ուռամբք ջարդեալ՝ հազիւ զերծուցեալ հանէին զերկաթսն ի մարմնոյ սրբոցն, չարաչար կոտորելով եւ վիրաւորելով զմարմինս նոցա. որք զահագին ցաւս վշտացն առ ոչինչ համարեալ. այլ եւ ձգտեալ¹ յերկարեր գործն մինչեւ յերրորդ ժամ աւուրն, հանդերձ ընդ նոսա կապելովք նախարարաւքն Զայոց աղաւթիւք եւ փառաւորելով զցաւացածոցն զՔրիստոս աւրինէին:

ԾԳ. Յայնժամ հրաման տայր Վեհդենշապուհ եւ որք ընդ նմա աւգնականքն էին՝ կոչել ի ծածուկ ի գիշերի զականաւոր արս շահաստանին, նոյնպէս եւ զերեւելիս ոմանս ի մոզուցն. եւ պատուիրէին նոցա հրամանաւ արքունի. «Դի՛ք, ասէ, զկեանս ի մտի զիրաքանչիւր անձին ի տան, եւ յիշեցէ՛ք զերկիւղ թագաւորաց, որք նման աստուածոց² իշխեն սպանանել եւ կեցուցանել, պատուել եւ անարգել. եւ մի՛ զոք յաւրես յայսմանէ մինչեւ ցրովանդակել ամենայն կարաւանին արքունի եւ ի Վրկան հասանել, զհայ այր, ուստի եւ իցէ, կամ ի մանկտոյ կապելոց նախարարացն Զայոց, որ ի շահաստանիս են, եւ կամ ի մանկանց³ կապելոցս երիցանցս, զորս մեք այսար ի բաց տանիմք⁴, եւ կամ բնաւ հայ զոք, որ յանկարծ թէ եւ այլուստ ուստեք եկեալ իցէ այսր բնակել⁵՝ թողուլ արտաքս քան զդուռն շահաստանիս. եւ գտանիցիք առանց ամենայն թողութեան ազգաւ հարեալք եւ դառն մահու մեռանիցիք ի թագաւորէն, եւ մեր անձինք անպարտ լիցին⁶ յայնպիսի չարեաց, որ ի վերայ ձեր հասանիցեն. այլ զգուշացարո՛ւք երկիւղիւ եւ հոգալով հասուցանել բարի շնորհակալութիւն ի վերայ անձանց եւ մեր եւ ձեր հասարակաց»։ 2 Զանզի ըստ հրամանի թագաւորին երկնչէին, թէ մի՛ գուցէ ոք ի մանկանց նախարարացն կապելոց, գաղտ այլակերպեալ, հետագաւտիցէ զայն ճանապարհ գնացից նոցա։ 3 Չոր Փրկիչն Քրիստոս ընդ նոսին իսկ առաքեալ էր զցուցակ եւ զյայտնիչ⁷ աշխարհի՝ գանձուն մեծի, եւ նոքա, նման Զրէիցն, Պիղատոսի զաւրուն հրամայէին պահել զգերեզմանն, զոր Բանն Աստուած⁸ հրեշտակաւք բացեալ յայտներ զինքն հաւատացելոց յանուն նորա. որ եւ ասացն եւ կատարեալ երեւեցուցանէ անսուտ զասացեալս իւր

1 Ձ. ձկտեալ

2 ՏՏ. աստուծոյ

3 Ձ. ի մանգանց

4 Ատ. տանեմք

5 Ձ. բնակեալ

6 ՁԱտ. լիցի

7 ԲԳտ. զյայտնի

8 Գտ. Բանն Աստուծոյ